

Էսաց.

«Բօլ¹⁾ ի կան կեաս վեար դիւնիին²⁾,

Բօլ ի կան կեաս վեար դիւնիին,

Միւր վիւրջ մեռնիւն ի»:

Էսաց.

«Մեռնիւ չիւնիմ վեար դիւնիին,

Անժառանգ, անմախ իմ,—

Մեռնիւ չիւնիմ վեար դիւնիին»:

Էսաց.

«Վինա՛ Վանայ քեաղաք.

Քիւ խաց թխուկ ը,

Քիւ էմագ իփուկ ը

Մինչիւ օրն դատաստան»:

Էլաւ, կինաց, խասաւ Ոստանայ կապան. որ խասաւ Ոստանայ
կապան, էնդեղէն,—մէկ իշխան կեր, կապ էթալ, զՄՏեր կապից:
ՄՏեր ձիով ինկաւ կապ. ձին ինկաւ կապ, զինք դարձաւ, էկաւ
դեախ մօր գերրզման, խօր: Վինաց, էսաց.

«Մէրիկ, վիւր իլի, մէրիկ, վիւր իլի^{*)},

Ոստանայ քիւռիկ-Ջալալին կապ ինկի»:

Էսաց.

«Յիշա՛ իմ զխացն ը գինին,

Տէր կենդանին,

Մարուծայ բանձր Աստուարածին,

Վեար ՄՏերը աջ թիւին.

Քեզը զթուրն ը կէծակին,

Վ՛ղարկիս խրաբայ³⁾ կապանին,

Համ կը կտրիր ըզէրկաթ, ըզոսկին,

Տիւ կ'երթաս խատ քիւ խացին»:

1) Բաւական է: 2) Աշխարհ: 3) Աւերակ:

*) Երգ է: